30 նոյեմբերի 2017 թվականի N 1526 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 1104-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի «Ներդրումային ծրագրի շրջանակներում «Քեյր Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» N 1104-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) 13-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14-19-րդ կետերով.

«

14.	8441	Ամբողջովին ավտոմատացված հոսքագիծ -խոնավ անձեռոցիկներ արտադրող հոսքագիծ	հատ	1	Թուրքիա/Թուրքիա	28800000
15.	8422	Ամբողջովին ավտոմատացված հոսքագիծ -թերմոփաթեթավորման հոսքագիծ	հատ	1	Թուրքիա/Թուրքիա	33600000
16.	8419	Ջրի թորման սարք	հատ	1	Թուրքիա/Թուրքիա	2880000
17.	8479	300 լ-ոց խառնող ցիստեռն՝ չժանգոտվող պողպատից	հատ	2	Թուրքիա/Թուրքիա	1200000
18.	7309	300 լ-ոց կուտակիչ ցիստեռն՝ չժանգոտվող պողպատից	հատ	2	Թուրքիա/Թուրքիա	720000
19.	8441	Մեկհատանոց խոնավ անձեռոցիկի հոսքագիծ	հատ	1	Թուրքիա/Թուրքիա	9600000

».

2) «Ընդամենը» պարբերության մեջ «170 880 000» թիվը փոխարինել «247 680 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ